ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2025 թվականի թիվ 159-Ա

ք.Երևան

«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2025 թվականի նոյեմբերի 28-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 65 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովն իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս պարզել է, որ լսողական մեդիածառայություն մատուցող «ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Հեռարձակող) 2025 թվականի նոյեմբերի 10-ից սկսած չի ապահովել «ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» (այսուհետ նաև՝ Ծրագիր) լսողական ծրագրի 24 ժամ շարունակ հեռարձակումը:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից 2025 թվականի նոյեմբերի 20-ի թիվ Ե/03/03.1/930-25 գրություն է ուղղվել «ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊ ընկերությանը, ներկայացնելու ՀՀ Գեղարքունիքի մարզում սփռվող «ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» լսողական ծրագրի 2025 թվականի նոյեմբերի 13-ից մինչև 19-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրությունը:

Ի պատասխան վերոնշյալ գրության՝ «ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊ ընկերությունը 2025 թվականի նոյեմբերի 26-ի գրությամբ հայտնել է՝ «*(...) նոյեմբերի 10-ից «Ռադիո Ալֆայի» ծրագրերի հեռարձակումը անջատվել է ք. Սևան՝ 96.3 ՄՀց, ք. Գավառ՝ 99,7 ՄՀց, ք. Մարտունի՝ 94.1 ՄՀց հաճախականություններով: Դադարեցման պատճառը հաղորդիչի խափանումն է՝ առաջացած կայծակի հարվածի հետևանքով: Մենք օպերատիվորեն աշխատում ենք խնդրի լուծման ուղղությամբ: Եթերի վերականգնման պահին անմիջապես կտեղեկացնենք Ձեզ:*»:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 修改值 կետով և հիմք ընդունելով Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության 28.11.2025թ. թիվ Ձ/279-25 զեկուցագիրը, 2025 թվականի նոյեմբերի 28-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 65 վարչական վարույթը:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2025 թվականի նոյեմբերի 28-ի թիվ Ե/04/04.1/960-25 և դեկտեմբերի 02-ի թիվ Ե/04/04.1/971-25 գրություններով ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի շուրջ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը նշված գրությունների և հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2025 թվականի դեկտեմբերի 04-ին ներկայացրել է պարզաբանում, որում մասնավորապես նշել է.

«*(...) «Ռադիո Ալֆա» ռադիոընկերության հեռարձակման ժամանակավոր դադարեցումը սկսած «10» նոյեմբերի 2025 թվականից մինչև 03 դեկտեմբերի 2025 թվականը, կրում է* ***ֆորս-մաժորային բնույթ:***

Կայծակի հարվածի հետևանքով վնասվել է հաղորդիչի սարքավորումը/1կվտ «Էլենոս», արտադրված Իտալիայում/, որի հետևանքով հեռարձակումը դարձել է ֆիզիկապես անհնար: Հաղորդիչ սարքավորումը տեղակայված է ***բարձր լեռնային և դժվարամատչելի տարածքում՝*** *«ԱՉՈՆ» ՍՊԸ աշտարակների վրա, որտեղ աշխատանքների իրականացումը հնարավոր է միայն սահմանափակ եղանակային պայմաններում և մասնագիտացված տեխնիկական միջոցների ներգրավմամբ:*

Նշված ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- *տեխնիկական նախնական զննություն,*
- *պարզվել են վթարի պատճառները.*
- *ձեռնարկվել են միջոցառումներ վնասված սաքավորումների, մասնավորապես էլեկտրասնուցման բլոկի ապամոնտաժման ուղղությամբ, որանք այնուհետև ուղարկվել են Իտալիա վերանորոգման նպատակով,*
- *իրականացվել են համապատասխան աշխատանքներ և սույն թվականի դեկտեմբերի 3-ին, ժամը 16,40-ին հեռարձակումը վերականգնվել է*

Հաստատում ենք, որ հեռարձակման դադարեցումը չի հանդիսանում կամավոր, դիտավորյալ կամ լիցենզային պարտավորություններից հրաժարման դրսևորում:

Սույն իրավիճակը բացառապես տեխնիկական ֆորս-մաժորային բնույթի հետևանք է:

Ելնելով վերոնշյալից՝ խնդրում ենք.

- *ճանաչել տեղի ունեցածը որպես ֆորս-մաժորային հանգամանք,*
- *չկիրառել լիցենզիայի չեղարկման կամ դադարեցման միջոցներ.*

Կից ներկայացնում ենք Սարքավորման մասերի լուսանկարներ»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Տեսալսողական մեդիայի մասին», «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տեսալսողական մեդիածառայություն մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիածառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող)՝ Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակազորած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ։

Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հեռարձակողի հեղինակազորման կամ լիցենզիայի գործողությունը կասեցվում է, եթե լիցենզիա ստացած Հեռարձակողն առանց որևէ հիմնավոր պատճառի 24 ժամ շարունակ չի ապահովել տեսալսողական հաղորդումների հեռարձակում։

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի սահմանող դրույթները։

Քննարկվող համատեքստում հատկանշական է, որ Հեռարձակողը 2021 թվականից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձ (սփռման տարածքը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ՝ ք.Սևան՝ 96.3 ՄՀց, ք.Գավառ՝ 99.7 ՄՀց, ք.Մարտունի՝ 94.1 ՄՀց, ք.Վարդենիս՝ 97.1 ՄՀց, ք.Ճամբարակ՝ 98.7 ՄՀց հաճախականություններով, լիցենզիայի գործողության ժամկետը, սերիան և համարը՝ ՌՀ N 327, 14.12.2021թ.- 14.12.2028թ.)։

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և, ի թիվս այլնի, Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կիրարկման ապահովման համար։

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք.

«ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊ ընկերությունը 2025 թվականի նոյեմբերի 10-ից սկսած չի ապահովել «ՌՈՒՍՍԿՈՅԵ ՌԱԴԻՈ» լսողական ծրագրի 24 ժամ շարունակ հեռարձակումը հետևյալ հաճախականություններով՝ ք.Սևան՝ 96.3 ՄՀց, ք.Գավառ՝ 99,7 ՄՀց և ք.Մարտունի՝ 94.1 ՄՀց։

Հանձնաժողովն ուսումնասիրել է Հեռարձակողի կողմից ներկայացված պարզաբանումներն, ըստ որոնց՝ կայծակի հարվածի հետևանքով վնասվել է հաղորդիչի սարքավորումը, որի հետևանքով հեռարձակումը դարձել է ֆիզիկապես անհնար և նշել է նաև, որ նշված իրավիճակը բացառապես տեխնիկական և ֆորս-մաժորային բնույթ է կրում և կցել է սարքավորման վնասված մասերի լուսանկարներ։

Սակայն սույն պատճառաբանությունները բավարար հիմք չեն կարող հանդիսանալ Օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթով սահմանված իրավախախտումը չարձանագրելու և պատասխանատվության միջոց չկիրառելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: **Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի** առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետը սահմանում է.

«1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.»:

Այսպես, հիմք ընդունելով վերը նշված օրենքների դրույթները, արձանագրում ենք, որ.

Ֆորս մաժոր են համարվում այնպիսի արտաքին, անկանխատեսելի և անխուսափելի հանգամանքները, որոնք առաջանում են կողմերի կամքից անկախ և օբյեկտիվորեն անհնար են դարձնում պարտավորության կատարումը և, միաժամանակ, անկախատեսելի հանգամանքի և պարտավորության չկատարման ***միջև առկա է անմիջական պատճառահետևանքային կապ:***

1. Հեռարձակողը, փաստացի պետք է ապացույցներ ներկայացներ առ այն, որ 2025 թվականի նոյեմբերի 10-ին մթնոլորտում տեղի է ունեցել ամպերի կամ ամպի և երկրի միջև կայծային էլեկտրական պարպում, որն էլ բնորոշվում է որպես կայծակ:

2. Հեռարձակողի վրա է դրված ապացուցման պարտավորությունն առ այն, որ տեղի ունեցած և արձանագրված մթնոլորտային երևույթն ազդել, տվյալ դեպքում խաթարել է և անհնարին է դարձրել պարտավորությունների պատշաճ կատարումը՝ 2025 թվականի նոյեմբերի 10-ին Ծրագրի հեռարձակումը ք.Սևան՝ 96.3 ՄՀց, ք.Գավառ՝ 99,7 ՄՀց, ք.Մարտունի՝ 94.1 ՄՀց հաճախականություններով,

անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով:

Արձանագրում ենք, որ Հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 19-ին կայացած վարչական վարույթի քննարկման նիստին Հեռարձակողը մասնակցել և ներկայացրել է խնդրանք ապացույցներ ներկայացնելու նպատակով լրացուցիչ ժամանակ տրամադրելու վերաբերյալ: Հանձնաժողովը բավարարել է խնդրանքը և, հիմք ընդունելով 2021 թվականի մարտի 12-ի «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 43-Լ որոշման 18-րդ կետը, քննարկվող հարցի քննարկումը հետաձգել է՝ տեղափոխելով այն հաջորդ հերթական նիստի օրը՝ 2025 թվականի դեկտեմբերի 26-ը:

Հանձնաժողովի 26.12.2025թ. նիստին Հեռարձակողը ներկայացրել է վերը նշված ապացույցները, մասնավորապես, ներկայացրել է «ELENOS» Srl (Իտալիա) կազմակերպությունից (այսուհետ՝ արտադրող) 23.12.2025թ. ստացած ELENOS FM հաղորդիչի մեջ տեղադրված սնուցման բլոկի (S/N: EPSU1KWPZ100) (այսուհետ՝ սնուցման բլոկ) տեխնիկական գնահատման եզրակացությունը (այսուհետ՝ տեխնիկական եզրակացություն) և LightningMaps.org կայքից՝ 10.11.2025թ., ժ.՝ 00:00-ից 11.11.2025թ., ժ.՝ 00:00 (UTC) ընթացքում տեղի ունեցած կայծակի տեղանքի վերաբերյալ արված լուսանկարի պատճենը:

Ուսումնասիրելով ներկայացված ապացույցները՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ ըստ վերոնշյալ տեխնիկական եզրակացության՝ արտադրողն իրականացրել է սնուցման բլոկի տեխնիկական ախտորոշում և լաբորատոր ստուգում, որի արդյունքում հանգել է եզրակացության առ այն, որ

- վնասի պատճառը սնուցման բլոկի վրա առկա ակնհայտ վնասվածքներն են, որոնք բնորոշ են անոնորմալ էլեկտրական լարմանը (էլեկտրական սթրես), ինչպիսիք են ցանցում լարման ուժեղ տատանումը կամ բարձր էներգիայի էլեկտրական պարպումը,
- հաշվի առնելով վնասվածքի բնույթը՝ ամենայն հավանականությամբ սնուցման բլոկի խափանման պատճառը կայծակից առաջացած լարման թռիչքն է,
- նման հանգամանքներում սնուցման բլոկի մեջ ներկառուցված ստանդարտ պաշտպանիչ համակարգերը բավարար չեն այս մասշտաբի ներքին վնասները կանխելու համար,
- հայտնաբերված վնասն ունի արտաքին ծագում և չի հանդիսանում արտադրական թերության, սխալ շահագործման կամ բաղադրիչների բնական մաշվածության հետևանք:

Հանձնաժողովն արձանագրում է, որ վերոգրյալը բավարար է ապացուցված համարելու փաստն առ այն, որ Հեռարձակողի կողմից հեռարձակման անհնարինությունն անմիջականորեն պայմանավորված է եղել մթնոլորտային երևույթի՝ կայծակի հարվածով, որն ազդել, տվյալ դեպքում խաթարել է և անհնարին է դարձրել հեռարձակումը, այսինքն՝ առկա է անհաղթահարելի ուժ (ֆորս-մաժոր):

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«4. Տեսալսողական հաղորդումների հեռարձակման ընթացքում կատարված տեխնիկական կանոնների խախտման, թերացումների կամ հաղորդումների հեռարձակումը չապահովելու համար անձն ազատվում է պատասխանատվությունից, եթե հիմնավորվում է, որ դրանք թույլ են տրվել՝

1) պետական լիազորված մարմինների կողմից տեխնիկական կանոնների կամ չափորոշիչների փոփոխության պատճառով.

2) տեխնիկական վերազինման նպատակով, որի մասին դրա իրականացումից առնվազն 30 օր առաջ գրավոր հիմնավորմամբ անձը տեղյակ է պահել կարգավորող պետական մարմնին և ստացել թույլտվություն.

3) անհաղթահարելի ուժի հետևանքով:

Հետևաբար, հաշվի առնելով ողջ վերոգրյալը, Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ քննարկվող վարչական վարույթի առարկան՝ տվյալ դեպքում հեռարձակողի կողմից 24 ժամ շարունակ առանց որևէ հիմնավոր պատճառի հեռարձակման չիրականացումը տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի հետևանքով, որն առաջացել է Հեռարձակողի կամքից անկախ, օբյեկտիվորեն անհնար է դարձնում պարտավորության կատարումը և, միաժամանակ, անկանխատեսելի հանգամանքի և պարտավորության չկատարման միջև **առկա է անմիջական պատճառահետևանքային կապ:**

Այսպիսով բացակայում է վարչական իրավախախտումը, ինչից ելնելով Հանձնաժողովն արձանագրում է, որ 2025 թվականի նոյեմբերի 28-ին հարուցված թիվ 65 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է, որ վարչական վարույթը ենթակա է կարճման, եթե բացակայում է վարչական իրավախախտման դեպքը կամ կազմը:

Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝ մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով և 282-րդ հոդվածի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊ ընկերության նկատմամբ 2025 թվականի նոյեմբերի 28-ին հարուցված թիվ 65 վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՌԱԴԻՈ ԱԼՖԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2025թ. դեկտեմբերի 26
ք.Երևան